

## **Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆԻ «ՑԱՅԳԱԼՈՅՍ»ԸՂ**

Էսսեան սանուց միութեան չորրորդ Գրական ասուլիսը՝ նուիրուած Ռուբէն Զարդարեանի *Յայգալոյսի*ն վերլուծութեան՝ տեղի ուեցաւ կիրակի, 5 մայիս 1913, Բերայի Էսսեան վարժարանի մէջ, նախագահութեամբ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ:

Յաջորդաբար խօսք առին Յ. Ճ. ՄԻՐՈՒՆԻ՛ որ ներկայացուց Զարդարեանի կեանքն ու գրական գործունէութիւնը, ՏԻԿ. ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ եւ Պ. ԵՐՈՒԱՆԻ ՍՐՄԱՔԷՇԻՄԱՆԼԵԱՆ՝ որոնք Զարդարեանի գործին վերլուծումը ըրին, Պ. ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԵԱՆ՝ որ խօսեցաւ գաւառի գրականութեան եւ այդ տեսակէտով Զարդարեանի գործին մասին, եւ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴ.՝ որ իր փակման խօսքին մէջ ներկայացուց գաւառի հոգին, եւ անոր մտնակալու անհրաժեշտութիւնը: